

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 22

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

16.10.2019թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Գ.Մարկոսյանը - մարզպետի տեղակալ
- Վ.Խաչատրյանը - գլխավոր քարտուղարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Ա.Մխիթարյանը, Ռ.Հարությունյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Է.Հախվերդյանը, Ա.Շահվերդյանը, Լ.Բերոյանը, Գ.Բաղդասարյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Աղլոյանը, Ա.Գասպարյանը, Հ.Մկրտչյանը, Ն.Համբարձումյանը - ստորաբաժանումների ղեկավարներ և այլ պաշտոնատար անձինք
- Լ.Ասլանյանը -մարզպետի խորհրդական
- Հ.Այվազյանը -մարզպետի խորհրդական
- Ռ.Խանզադյանը -մարզպետի օգնական
- Ն.Հովհաննիսյանը -մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ՝

1. Սեփական եկամուտների հավաքագրման մասին:
  - զեկ.՝ Դ.Մանուչարյան
2. Ընթացիկ շինարարական և ասֆալտապատման աշխատանքների ընթացքի և խնդիրների մասին՝ ներառյալ սուբվենցիոն ծրագրերը (Վանաձոր, Ախթալա, Դսեղ, Օծուն, Լոռի Բերդ, Ալավերդի, Ստեփանավան, Սպիտակ, Մ, Լեռնապատ):
  - զեկ.՝ Ա.Ջանազյան
3. Դպրոցներում իրականացվող շինարարական աշխատանքների մասին :
  - զեկ.՝ Ա.Ջանազյան
4. Տարածքների համաչափ զարգացման հարթակը կայքում տեղադրելու և տեղեկատվության լրացման հետ կապված զեկույց:
  - զեկ. Հ.Մկրտչյան
5. Երեք հազար և ավելի բնակիչ ունեցող համայնքներում համացանցային շահագործման խնդիրների մասին:
  - զեկ.՝ Հ.Մկրտչյան
6. Տուրիզմի կոմիտեին ներկայացվելիք զբոսաշրջության ոլորտի ծրագրերի մասին:
  - զեկ.՝ Հ.Մկրտչյան
7. Բաժնի գործառույթների հետ կապված ընթացիկ խնդիրների մասին տալ տեղեկատվություն: (Շինարարների ճամբար, Բուսաբանական այգի և այլն):
  - զեկ.՝ Է.Հախվերդյան
8. Փայտով ջեռուցվող դպրոցներում փայտի ձեռքբերման մասին:
  - զեկ.՝ Ռ.Հարությունյան
9. Մանկավարժական գործունեությամբ զբաղվող աշխատակիցների՝ տվյալ ուսումնական հաստատություններում գրաֆիկի ներկայացում:
  - զեկ.՝ Ա.Աղլոյան
10. Արևային կայանների տեղադրման ընթացքի մասին:
  - զեկ.՝ Հ.Պապոյան
11. Վանաձորի օրվա միջոցառումներին մեր մասնակցության մասին:
  - զեկ.՝ Ա. Ռևազյան
12. Գյուղատնտեսական ոլորտի մասնագետների վերապատրաստման մասին:
  - զեկ.՝ Ա.Գասպարյան

## Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

### 1. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

ա) Մեկշաբաթյա ժամանակահատվածում ներկայացնել հաշվետվություն նախկինում տրված հանձնարարականի կատարման վերաբերյալ, որը վերաբերվում էր ստորաբաժանման աշխատանքների խոչնդոտներին և կատարելագործմանը:

բ) Ապահովել ստորաբաժանումների աշխատակիցների կողմից գործուղումներից վերադառնալուց հետո սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացումը:

գ) Եռօրյա ժամկետում ապահովել ստորաբաժանումների աշխատակիցների այլ հաստատություններում մանկավարժական գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը անձնակազմի կառավարման բաժին:

### 2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ռ.Հարությունյանին՝

Եռօրյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ «Վանաձորի օրվա» միջոցառումների հետ կապված:

### 3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել ցածր հավաքագրում ունեցող համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման պլանային առաջադրանքների կատարման ապահովման ուղղությամբ:

### 4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ռ.Հարությունյանին, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ջանազյանին՝

Հսկողություն սահմանել հանրակրթական դպրոցների կողմից իրականացվող շինարարական աշխատանքների օրինականության և որակի վերահսկողության նկատմամբ:

### 5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետի ժ/պ Է.Հախվերդյանին՝

15 օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն ԱԳԼՃԿ-ների տնօրենների նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցների և հետագա վերահսկողության արդյունքների վերաբերյալ:

 Invalid signature

X 

ԱՐՄԻՆԻԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան  
Հեռ. 0322 /4-32-99/